

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Գյումրու թիվ 38 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա «Մեթոդի տեղն ու դերը կրթական համակարգում»

Կատարող Նաիրա Ռազմիկի Խաչատրյան  
/անուն,ազգանուն հայրանուն/

«Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ      Տեխնոլոգիա  
/դպրոց, մասնագիտությունն ըստ վերապատրաստման խմբի/

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան  
/անուն,ազգանուն /

2022թ.

## Բովանդակություն

1. Ներածություն.....	2
2. Հիմնական մաս	
2.1 Կրթական տեխնոլոգիաներ.....	4
2.2 Կառուցողական մանկավարժություն.....	5
2.3 Ուսուցման մեթոդներ, հնարներ, վարժություններ.....	6
2.4 Ուսուցման մեթոդների դասակարգումը.....	9
2.5 Նախագծերի մեթոդ.....	11
3. Հետազոտական մաս	
3.1 Նախագծային դասի պլանավորման օրինակ.....	15
4. Եզրակացություն.....	17
5. Օգտագործված գրականություն.....	18

## Ներածություն

Հանրակրթական բարեփոխումների ընդհանուր ուղղվածությունը և տրամաբանությունը պայմանավորում են ինչպես ուսումնական նոր ծրագրերի ու դասագրքերի, այնպես էլ ուսուցման կազմակերպման նոր համակարգերի ու մոտեցումների ներդրման անհրաժեշտություն:

Արդյունավետ դասավանդման համար նորօրյա դպրոցի ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց կենսագործմանն ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հնտություն:

Դասավանդման երեք կարևոր հիմնախնդիրներից առաջինը՝ ինչ սովորեցնելը, ծրագրային նյութի միջոցով իբրև ճանաչողական-իմացական արժեք՝ գիտելիք, մատուցվում է սովորողներին, երկրորդը՝ ինչու սովորեցնելը, կրթության բովանդակությունը կազմող կարողություններ, հմտություններ և արժեքային համակարգ բաղադրիչների միջոցով շեշտադրում է ինչ սովորեցնելու նպատակը, իսկ երրորդը՝ ինչպես սովորեցնելը, պայմանավորում է դասավանդման կերպը՝ եղանակը, միջոցներն ու ձևերը, այն, ինչ կազմում է ուսուցման մեթոդաբանությունը:

Թեպետ արդյունավետ դասավանդում կազմակերպելու տեսակետից մեթոդների տեսությունն ամենակարևորներից է, սակայն դեռևս հստակ և ամբողջական չէ:

Տարաբնույթ և մոտավոր են նաև մեթոդների դասակարգման, մեթոդական հնար, ուսուցման եղանակ, ուսումնական վարժություն հասկացությունների բնորոշումները և սահմանումները. միևնույն մեթոդը, հնարը, վարժությունը մասնագիտական գրակա նության մեջ հանդիպում են տարբեր, երբեմն միմյանցից էականորեն տարբերվող սահմանումներով և անվանումներով, հաճախ էլ՝ մեկը մյուսի փոխարեն: Եվ եթե ուսուցիչն անցյալում տուժում էր նորագույն մեթոդական գրականության պակասից, դասավանդման մեթոդների սահմանափակ և միօրինակ ուղղվածությունից, ապա այսօր նրան հսկայական ջանքեր են պետք՝ ճիշտ կողմնորոշվելու այսօրինակ մոտավոր տեղեկատվության, հախուռն կերպով դպրոց մուտք գործած ուսուցման տարատեսակ մոտեցումների, դասերի կազմակերպման մոլորեցնող ձևերի խայտաբղետության մեջ:

Նոր և շատ մեթոդների իմացությունը թեև անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ արդյունավետ դասավանդման համար: Կարևոր է նաև մեթոդները հմտորեն համադրելու և նպատակահարմար կիրառելու մասնագիտական ձեռնհասությունը, ինչը ենթադրում է մասնագիտական լուրջ պատրաստություն, փորձառություն, նաև անձնային որոշակի որակներ:

## 2.1 Կրթական տեխնոլոգիաներ

Կրթական տեխնոլոգիան մոդելի և փաստացի գործընթացի համադրությամբ ամբողջական կրթական գործունեության իրականացումն է: Այն իր մեջ ներառում է անհատական և խմբային, տեղեկատվական և դիագնոստիկ, կազմակերպչական և զարգացման, հոգևոր, մարդասիրական, մոտիվացիոն և կառավարչական բաղադրիչներ:

Տեխնոլոգիա բառը ծագում է հունարեն <<Techne>> և <<Logos>> բառերի ձուլումից: <<Techne>> այսինքն՝ արվեստ, հմտություն, կարողություն և <<Logos>> գիտություն, օրենք:

Բառացի <<տեխնոլոգիա>> նշանակում է հմտության գիտություն:

Աշակերտի ճանաչողական և ստեղծագործական գործունեության իրականացման համար, ուսուցման գործընթացում օգտագործվում են ժամանակակից կրթական տեխնոլոգիաները, որոնք հնարավորություն են տալիս բարելավել կրթության որակը և առավել արդյունավետ օգտագործել ուսումնական ժամանակը:

<<LEGO Education>> — ը առաջարկում է կրթական դասավանդման տեխնոլոգիաների լայն շրջանակ, որոնք օգտագործվում են ուսումնական գործընթացում: Նորարարական կրթական տեխնոլոգիաները փոխկապակցված են և կազմում են որոշակի դիդակտիկ համակարգ, որի նպատակն է աշակերտների հոգևոր արժեքների դաստիարակությանը, ինչպիսիք են՝ բաց լինելը և փոխհամագործակցությունը՝ ապահովելով յուրաքանչյուր ուսանողի ուսուցման կարիքները համաձայն նրա անհատականության: Ինչպես նաև գիտության դասավանդման հարստացումը հետևյալ ոլորտներում՝ տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա:

<<LEGO Education>>-ը խաղի և համագործակցության միջոցով զարգացնում է հմտություններ, ինչպիսիք են՝

- Ինքնարդյունավետությունը,
- Համագործակցելու ունակությունը,
- Ինքնավստահությունը,
- Համատրությունը և ուշադրությունը:

ՀՀ կրթական համակարգում արմատական բարեփոխումները վկայում են, որ ուսուցման պահանջվող որակի ապահովման հիմնախնդիրների լուծումը պայմանավորված է ուսուցման նորագույն մեթոդների կիրառումով: Գաղտնիք չէ, որ ուսուցման ավանդական մեթոդները, ավելի ճիշտ՝ գիտելիքներ սերտել տալու մեթոդներն այսօր չեն կարող ապահովել ուսման որակ և ստեղծարար կարողությունների զարգացում:

## 2.2 Կառուցողական մանկավարժություն

Կառուցողական մանկավարժությունն ընդհանուր հասկացություն է: Այն ոչ թե մեթոդ է, այլ մոտեցում, որը հիմնված է այն ենթադրության վրա, որ անհատն իր գիտելիքները ձևավորում (զարգացնում) է՝ ակտիվորեն մասնակցելով ճանաչողական գործընթացին: Այս մտավոր գործընթացի համար անհրաժեշտ է նաև, որ աշակերտը համագործակցի մյուսների հետ: Պարզեցված և համակարգված ուսումնական ծրագիրն աշակերտին չի կարող նման փորձառություն տալ, մինչդեռ իրական իրավիճակները կարող են:

Խիստ կարևոր է համընդգրկուն ուսումնական միջավայրի ստեղծումը: Տեղեկատվության աղբյուրն այլևս գրքերն ու ուսուցիչները չեն, այլ իրական կյանքը: Խմբային աշխատանքի միջոցով աշակերտները հնարավորություն ունեն իրական կյանքին նմանեցված իրավիճակներում որոնելու իրական խնդիրների լուծումներ՝ օգտագործելով տարբեր ձևեր և տարատեսակ եղանակներ: Կառուցողական մանկավարժության համար անհրաժեշտ են ուսման հատուկ պայմաններ, որոնք հնարավորություն կտան աշակերտներին համագործակցելու և օգնություն ցուցաբերելու միմյանց: Նրանք կարող են օգտվել մի շարք գործիքներից և տեղեկատվության աղբյուրներից՝ իրենց խնդիրները լուծելու և նպատակին հասնելու համար:

Անհատական համակարգիչներով կահավորված դասարաններում կարող են կիրառվել մի շարք մանկավարժական մեթոդներ և ուսման եղանակներ (ինչպես օրինակ՝ խնդրի լուծմանն ուղղված և նախագծերի վրա հիմնված ուսուցում): Անհատական համակարգիչներով համալրված դասարանները շատ ավելի հարմար են ուսման ժամանակակից եղանակներ կիրառելու համար, քան ավանդական դասասենյակները, նույնիսկ եթե մեկ համակարգչից օգտվում է մի քանի աշակերտ: Պատշաճ կերպով կազմակերպված ուսման և աշխատանքային պայմաններում համագործակցային ճանաչողական գործընթաց կազմակերպելու համար բավարար է մեկ կամ երկու անհատական համակարգիչ:

## 2.3 Ուսուցման մեթոդներ, հնարներ, վարժություններ

«Մեթոդը» հունարենից փոխառված բառ է և ընդհանուր իմաստով նշանակում է ինչ-որ նպատակի հասնելու, խնդիր լուծելու եղանակ, իրականության տեսական կամ գործնական յուրացման հնարների միագումար, իսկ բառացի թարգմանությամբ ինչ-որ տեղ տանող ճանապարհ:

Մեթոդ հասկացության բառիմաստային պարզաբանումները, սակայն, մասամբ են բացահայտում նրա մանկավարժական բնույթն ու գործառության ուղղվածությունը:

Մասնագիտական գրականության մեջ ընդունված և տարածված են մեթոդի հետևյալ սահմանումները:

- Ուսուցչի և սովորողի փոխկապակցված համատեղ գործունեության եղանակ՝ ուղղված կրթության բովանդակության յուրացմանը.
- Ուսուցման այնպիսի ձև, որ կիրառվում է պարպերաբար և մեծ ազդեցություն թողնում մանկավարժական աշխատանքի ամբողջական ուղղվածության վրա.
- Ուսումնական նյութի կազմակերպման և ուսուցման ընթացքում ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության միջոց.
- Ուսուցման գործընթացում ուսուցչի և սովորողի միջև փոխազդեցություն արտացոլող մոտեցումների ու հնարների համախումբ, ուսուցչից դեպի աշակերտը գնացող մտքի ճանապարհ.
- Սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպման հիմքում ընկած տրամաբանական կատեգորիա.
- Ուսուցչի և սովորողի՝ ուսուցման նպատակներին ուղղված կարգավորված գործունեություն.
- Որևէ տիպի խնդիրների լուծման անհրաժեշտ գործողությունների վերջավոր, կարգավորված բազմություն:

Մեջբերված սահմանումները փաստում են, որ մեթոդը խնդրահարույց հարցերով բարդ և բազմակողմանի հասկացություն է: Այնուհանդերձ, գրեթե բոլոր սահմանումներն ունեն որոշակի իմաստային ընդհանրություն: Մեթոդն ուսուցչի և աշակերտի համագործակցության ձև է՝ միտված ուսումնական նպատակների իրականացմանը:



Ցանկացած թեմայի ուսումնասիրություն կարելի է կազմակերպել ամենատարբեր մեթոդներով: Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն ընտրությունը չի կարող ինքնանպատակ, կամայական լինել, շատ կարևոր է մեթոդի ճիշտ և նպատակահարմար ընտրությունը:

Մեթոդն ընտրելիս պետք է հաշվի առնել սովորողների գիտելիքների մակարդակը, տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները: Սովորողը պետք է հստակ իմանա՝ ինչ է անում և ինչու, պետք է մշտապես տեղյակ լինի՝ ինչ է իրենից ակնկալվում, պետք է վստահ լինի, որ ուսուցիչը աջակցելու, օգնելու է իրեն:

Ժամանակակից մանկավարժագիտության մեջ մեթոդների դասակարգման հիմքում ընկած են տարբեր մոտեցումներ. Դրանք երբեմն դասակարգվում են ըստ ճանաչողության աղբյուրների (ուսուցման խոսքային, դիտողական, գործնական մեթոդներ), առանձին դեպքերում դասակարգումը կատարվում է ըստ գիտելիքներ ձեռք բերելու միջոցների, ուսուցչի և սովորողի գործունեության բնույթի: Հաճախ հանդիպում են բացատրական-ցուցադրական, վերարտադրողական, մասնակի որոնողական և հետազոտական համարվող տարբերակումները: ԽԻԿ համակարգի պարագայում ընդունվում է ըստ դասի կառուցվածքային փուլերի դասակարգումը:

Առավել տարածված է մի մոտեցում, ըստ որի՝ ուսուցման մեթոդները պայմանականորեն կազմում են երկու խումբ՝ ավանդական և ժամանակակից:

Ավանդական համարվում են բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած են պատրաստի գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը. այս դեպքում սովորողն ուսուցչի հրահանգների պասիվ կրողն է:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռքբերման գործընթացում նրա ակտիվ և անմիջական մասնակցությունը:

Արդյունավետ դասավանդում իրականացնող գործոններ են նաև մեթոդական հնարներն ու վարժությունները:

Մեթոդը և հնարը նույնը չեն, ուղղակի ունեն որոշակի հարաբերակցություն: Եթե մեթոդը դեպի ուսումնական նպատակ տանող ճանապարհն է, ապա մեթոդական

հնարները, վարժությունները ճանապարհի ընթացքի խնդիրները լուծելու, հանդիպող դժվարությունները հաղթահարելու միջոցներ են:

Հնարը սովորաբար անկախ կիրառություն ունի, սակայն երբեմն մեխանիկորեն նույնացվում է մեթոդին կամ էլ համարվում է նրա բաղադրիչ տարրը:

Փորձառու ուսուցիչները թե՛ ավանդական, թե՛ ժամանակակից մեթոդներ կիրառելիս կարողանում են օգտվել հայտնի, նաև իրենց կողմից ստեղծված հնարներից:

Մասնագիտական գրականության մեջ հանդիպում է նաև *գծագրական դասակարգիչներ* հասկացությունը, սրանք երբեմն անվանում են գրաֆիկական կազմակերպիչներ:

1. Գծագրական կազմակերպիչներ հասկացության մեջ ընդգրկված են հասկացությունների աղյուսակը, T-աձև և m-աձև աղյուսակները, հասկացությունների քարտեզը, Վենի դիագրամը, պրիզման: Սրանք մտածողության ընթացքն առավել առարկայական շոշափելի և ակնառու դարձնող միջոցներ են և օգտագործվում են դասի տարբեր փուլերում:
2. Գծագրական դասակարգիչները մոդելներ կամ նկարներ են, որ արտահայտում են մտքերի հարաբերությունները, աշակերտներին ցույց են տալիս, թե ինչպես են ներքին ընկալումները երևան գալիս, սովորեցնում են մտածողության մեթոդները վերլուծելու և հասկանալու մարտավարությունը և այն ներկայացնում են տեսանելի ձևով:
3. Ներկայացվող մեթոդների, հնարների և վարժությունների հիմքում ընկած է աշակերտի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի գործընթացում նրա անմիջական և ակտիվ մասնակցությունը, երբ՝
  - Աշակերտը նյութը սովորում է՝ ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի,
  - Աշակերտն ապավինում է ոչ այնքան իր հիշողությանը, որքան ինքնուրույն, ստեղծագործական, քննադատական մտածողությանը,
  - Աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար,

- Աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ, սոցիալական փոխազդեցության, հաղորդակցական կարողություններ,
- Նյութի յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում ի մի բերելու, ամփոփելու, ակտիվացնելու և կիրառելու սովորածը,
- Ստեղծում է ինքնակրթության միջավայր,
- Ձևավորվում է ինքնակատարելագործման ձգտում:

## 2.4 Ուսուցման մեթոդների դասակարգումը

Յուրաքանչյուր ուսուցիչ դասարան մտնելուց առաջ անպայման իր առջև դնում է երկու կարևոր հարց. որն է կրթության նպատակը, և ինչ պետք է սովորեցնի ինքն իր աշակերտներին: Ահա այս հարցերի պատասխանների միջոցով է լուծվում կրթության բովանդակության յուրացման խնդիրը, որն իրականացվում է ‘մեթոդ’ հասկացության միջոցով:

Այսպիսով՝ ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության միջոց է, որով իրականացվում է ուսուցչի և սովորողների համագործակցությունը<sup>a</sup> ուղղված ուսումնառության վերոնշյալ արդյունքներին: Այն օգնում է ուսուցչին իրացնելու ուսուցման նպատակը, բովանդակությունը, չափորոշչային պահանջները, սովորողների համակողմանի և ներդաշնակ զարգացումը:

Ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մոթոդների իմացություն: Սակայն դա դեռևս բավարար չէ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Այստեղ չափազանց կարևորվում է ուսուցման նպատակներից ու նախանշված արդյունքներից բխող մեթոդների ընտրության և կիրառության կարողությունը:

Այսօր մեթոդները պայմանականորեն բաժանված են երկու խմբի<sup>a</sup>՝ ավանդական և փոխներգործուն: Ավանդական են համարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած են պատրաստի տեղեկատվության /գիտելիքի/ պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:

Փոխներգործուն /ինտերակտիվ/ մեթոդների հիմքում ընկած են սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման ընթացքին նրա անմիջական ու գործուն մասնակցությունը: Այս մեթոդների առանձնահատկությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ աշակերտը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով՝ մասնակցելով որոշակի գործընթացի, ընդգրկվելով թե՞ անհատական, թե՞ խմբային աշխատանքներում: Այդ կերպ նա յուրացնում է համագործակցային, սոցիալական փոխազդեցության և հաղորդակցական, ինչպես նաև ձեռք բերած գիտելիքը կիրառելու կարողություններ:

Որքան էլ ուսուցիչը ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն ադ գործողությունը չի կարող կամայական բնույթ կրել: Այդ խնդրի իրագործման հաջողությունը պայմանավորված է մի շարք գործոններով.

- ուսուցման նպատակը, խնդիրները,
- բովանդակությունը,
- նյութի քանակը և բարդությունը,
- սովորողների տարիքային առանձնահատկությունները,
- սովորողների պատրաստվածության մակարդակը,
- ուսումնական պարապմունքների տիպը, կառուցվածքը,
- ուսումնական ժամաքանակը,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակը:

## 2.5 Նախագծերի մեթոդ

Նախագծերի մեթոդը (*Project methods*) ուսուցման համակարգ է, որի ընթացքում սովորողները գիտելիքներ, կարողություններ, հմտություններ են ձեռք բերում աստիճանաբար բարդացող գործնական նախագծերի պլանավորման և իրագործման ընթացքում: Համաշխարհային մանկավարժության մեջ այս մեթոդը նոր երևույթ չէ: Այն առաջին անգամ նկարագրվել է 20-րդ դարի 20-ական թվականներին ԱՄՆ-ում կրթական բարեփոխումների շրջանում, ինչի արդյունքում կրթությունը դարձավ աշակերտակենտրոն: Հետագայում այն լայն տարածում ստացավ եվրոպական երկրներում: Մեթոդի ի հայտ գալը կապվում է Ջոն Դյուիի անվան հետ, երբեմն անվանում են նաև հիմնախնդիրների մեթոդ:

Նախագծերի մեթոդն իր նշանակությամբ կարևոր տեղ է զբաղեցնում ուսուցման ժամանակակից մեթոդների շարքում, 21-րդ դարի նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներից է, որը թույլ է տալիս անհատականացնելու ուսումնական գործունեությունը, սովորողներին հնարավորություն է տալիս դրսևորելու ինքնուրույնություն իրենց գործունեության պլանավորման հարցում, տեխնոլոգիա է, որը ներառում է բազմաթիվ այլ մեթոդներ: Նախագծային մեթոդի առանձնահատկությունն այն է, որ ուսուցումը կազմակերպվում է սովորողների նպատակային գործունեության միջոցով, ընդգծվում է կապը սովորողների կյանքի և առօրյայի հետ, ուսումնասիրության հիմնախնդիրները բխում են իրական կյանքից: Այս դեպքում անպայման կապահովվեն սովորողների հմտությունների, կարողությունների զարգացումը, տեղեկատվական դաշտում ճիշտ կողմնորոշվելու, քննադատական մտածողության զարգացումը: Փորձն ապացուցում է, որ նախագիծ մշակող և իրագործող սովորողները կարողանում են աշխատել խմբում, համագործակցել ընկերների հետ, կոնկրետ այս կամ այն խնդիրը լուծելու համար կիրառել տարբեր ոլորտներից ձեռքբերած իրենց գիտելիքները:

Ուսումնական նախագիծն ունի իր իրականացման փուլերը.

1. հիմնահարցի ձևակերպում
2. աշխատանքային խմբի (խմբերի) ձևավորում
3. աշխատանքի բաժանում
4. խմբերի, անհատների ինքնուրույն աշխատանք

5. հետազոտություն

6. ստացված արդյունքների ընթացիկ քննարկումներ

7. կատարված աշխատանքների ներկայացում.

- նախօրոք որոշվում է ներկայացման ձևը՝ տեսանյութ, ֆոտոշարք, հոդված

8. սովորողների և խմբի աշխատանքների գնահատում.

- գնահատումը կատարվում է և՛ դասավանդողի, և՛ սովորողների կողմից

- գնահատվում է յուրաքանչյուր սովորող

- գնահատվում է ամբողջ խումբը

9. հետագա աշխատանքի ուղիների նախանշում:

Յուրաքանչյուր մեթոդ, որը կարող է նպաստել սովորողի կողմից գիտելիքներ յուրացնելուն, հմտություններ ձևավորելուն, ինքնին արժեքավոր է: Այս առումով հայրենագիտական և ուսումնական ճամփորդությունները ևս կարևոր ու տպավորիչ նախագծեր են՝ որպես ուսուցման մեթոդ՝ իրենց փուլերով, օրինաչափություններով:

Այստեղ նախագծի բուն նպատակներից մեկը սովորողի մեջ ուսումնասիրվող նյութի վերաբերյալ հետաքրքրություն առաջ բերելը և դրան գնահատական տալն է: Ճամփորդությունը պետք է լինի նպատակաուղղված, զարգացնի սովորողի ճանաչողական ունակությունները, նպաստի բարոյական հատկանիշների ձևավորմանը, առաջացնի սեր հայրենիքի, նրա մշակույթի, պատմության, ինչպես նաև հարգանք հարևան ժողովուրդների նկատմամբ:

Նախագծի իրականացման ժամանակ անպայման աշխատում ենք կիրառել սովորողների՝ տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները: Այս խնդիրը հեշտ է լուծվում, եթե աշխատանքի բաժանումը կատարելիս ուղղորդվում ենք տարբեր առարկաներից սովորողների պատրաստվածության հաշվառմամբ: Իհարկե, միայն նախագծային աշխատանքներով չեն լուծվում մայրենի լեզվի ուսուցման հետ կապված խնդիրները, ուղղակի այն, ինչ չի կարելի անել այս մեթոդով, ըստիս, հնարավոր չէ անել ուսուցման գործընթացում կիրառվող մյուս մեթոդների միջոցով:

### 3.1 Նախագծային դասի պլանավորման օրինակ

Դասարան-----7-րդ

Առարկա-----տեխնոլոգիա

Նախագծի թեման-----Ընտանեկան բյուջե:

Նպատակ-----Ընտանեկան ռեսուրսների կառավորում և բյուջետավորում:

Տնտեսական կարողունակության զարգացում:

Նախագծի իրականացման փուլերը	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները																
Նախապատրաստական փուլ	Ներկայացնում է նախագծային աշխատանքի էությունը, փուլերը և հանձնարարում բաժանվել խմբերի:	Սովորողները փորձում են ինքնուրույն բաժանվել խմբերի: Խմբերում ընտրվում է ավագ:																
Պլանավորման փուլ	Հանձնարարում է սովորող-Ներին ուսումնասիրել <<Ընտանեկան բյուջե>> թեման և կատարել հետազոտություն: 1-ին խումբ ամսական կտրվածքով ընտանիքի կարիքները բավարարելու համար ըստ տրված եկամտի աղբյուրներից կազմել հավասարակշռված ծախսի տեսակը: 2-րդ խումբը կազմել պակասորդով ծախսի տեսակը: 3-րդ խումբը կազմել ավելցուկով ծախսի տեսակը:	Սովորողները ուսումնասիրում են առաջադրանքը և իրենց խմբերում կատարում աշխատանքի բաշխում: Խմբերը ներկայացնում են աղյուսակի տեսքով <table border="1" data-bbox="970 1093 1425 1391"> <thead> <tr> <th>եկամուտ / ծախս</th> <th>աշխատավարձ</th> <th>թոշակ</th> <th>Այլ եկամուտ</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>պարտադիր</td> <td></td> <td></td> <td></td> </tr> <tr> <td>սնունդ</td> <td></td> <td></td> <td></td> </tr> <tr> <td>Այլ ծախս</td> <td></td> <td></td> <td></td> </tr> </tbody> </table>	եկամուտ / ծախս	աշխատավարձ	թոշակ	Այլ եկամուտ	պարտադիր				սնունդ				Այլ ծախս			
եկամուտ / ծախս	աշխատավարձ	թոշակ	Այլ եկամուտ															
պարտադիր																		
սնունդ																		
Այլ ծախս																		
Հետազոտական աշխատանք	2 շաբաթ հետո հանձնարարում է վերջնական տեսքի բերել կատարած աշխատանքը հաշվետու դասին ներկայացնելու համար:	Խմբերը կատարում են վերջնական վերլուծություն, արդյունքների և պատրաստվում են հաշվետու դասին ներկայացնել իրենց կատարած աշխատանքները:																
Եզրափակիչ փուլ	Պատրաստում է հարցեր յուրաքանչյուր խմբին թեմայի վերաբերյալ: Նույնը հանձնարարում է խմբերին, որպեսզի ներկայացման ընթացքում լսեն և գրանցեն 2 հարց մյուս	Յուրաքանչյուր խումբ պատրաստվում է պատասխանել իրենց թեմայով հավանական հարցերին: Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները, կատարում եզրակացություններ և պատասխանում հարցերին:																



	խմբերից յուրաքանչյուր տալու հա-մար :Հրավիրում է տնօրինությանը, այլ ուսուցիչների և սովորողների:	
Գնահատում	Ուսուցիչը ամփոփում է, հրավիրվածները հայտնում են կարծիքներ: Գնահատում է իր գործունեությունն ու սովորողների ակտիվությունը:	Ինքնագնահատում: Հստակ և համոզիչ խոսելու, եզրակացու-թյուններ կատարելու և ներկայացնելու կարողություն:

## Եզրակացություն

Դասավանդողներն այսօր ուսուցման մեթոդների ընտրության մեծ հնարավորություններ ունեն: Խնդիրն այն է, թե մենք որքանով ենք տիրապետում ուսուցման ժամանակակից մեթոդներին, ուսուցման նպատակով մեր կողմից ընտրված կամ արդեն կիրառվող մեթոդները որքանով են համապատասխանում մեր դասավանդած առարկաների ուսումնական նպատակներին:

Ակտիվ ուսուցումը ուսուցիչների և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչները և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն էր, ապա այստեղ ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են՝ սուբյեկտ սուբյեկտային փոխհարաբերություններ: Պասիվ ուսուցումը ենթադրում է ուսուցում ավտորիտար ոճով, իսկ ակտիվ ուսուցումը ժողովրդավարական ոճով:

Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- Ուսումնական դրական խթանի ձևավորում,
- Աշակերտների ճանաչողական ակտիվության բարձրացում.
- Կրթական գործընթացին աշակերտների ակտիվ ներգրավում.
- Ինքնագործունեության խթանում,
- Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Աշակերտի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,
- Աշակերտի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

## Օգտագործված գրականություն

1. Հայկ Պետրոսյան «Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ» Երևան, 2012թ.:
2. Ս.Գ. Խաչատրյան «Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դասարաններում» Գյումրի-2006թ.:
3. «Ուսուցման արդյունավետ հնարներ» / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ: